



## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԺԱԿԱՏՈՒՄ

### ԽՆՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔՊԵՆՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍԸ

1952 թվականի դեկտեմբերի 12—20-ը Վիեննայում տեղի ունեցավ Խաղաղության պաշտպանության Ժողովուրդների կոնգրեսը, հրավիրված Խաղաղության Պաշտպանության Համաշխարհային Խորհրդի կողմից:

Կոնգրեսին ներկա էին տարբեր աշխարհայացքների, քաղաքական տարբեր ըմբռնումների և կրոնական զանազան համոզմունքների տեր մարդիկ, որոնք եկել էին աշխարհի բոլոր երկրներից և պատկանում էին հասարակական այլևայլ դիրքերի:

Չնայած դեղբաւանների ճամբորդությունը խափանելու համար հարուցված բազմաթիվ խոչընդոտներին, Վիեննայի «Կոնցերտ-հաուզում» հավաքվել էր շուրջ 2.000 մարդ, այդ թվում Խաղաղության պաշտպանության միջազգային շարժման նշանավոր գործիչներ՝ Ժողովուրդների միջև Խաղաղությունն ամրապնդելու համար» միջազգային Ստալինյան մրցանակի լատերեստներ, հասարակական, գրական և գիտական ականավոր գործիչներ, ինչպես և Խաղաղության կողմ-

նակիցների շարժմանը շահարած հարյուրավոր դեղբաւաններ:

Կոնգրեսը բացվեց դեկտեմբերի 12-ին, ժամը 4-ն անց 45 րոպեին, 150 հոգուց բաղկացած նախագահական կազմով: Առաջին նիստին նախագահեց պրոֆ. Ֆրեյտերիկ Ժոլիո-Կյուրին: Խաղաղության կողմնակիցների ավստրիական խորհրդի նախագահ քահանա էրվին Կոկը ողջունեց դեղբաւաններին: Ժոլիո Կյուրին հանդես եկավ ընդարձակ ներածական խոսքով: Ապա, մինչև կոնֆերենցիայի ավարտը՝ դեկտեմբերի 19-ը ճաներով հանդես եկան բոլոր ազգերի դեղբաւանների ներկայացուցիչները, արտահայտելով ժողովուրդների բուն ցանկությունն ու վճռականությունը՝ Խաղաղության պահպանման հարցի շուրջ:

Իր աշխատանքների վերջում, Խաղաղության պաշտպանության Ժողովուրդների կոնգրեսը միաձայնությամբ ընդունեց Գիմում՝ ուղղված հենց մեծ թերությունների կառավարություններին և Կոչ՝ ժողովուրդներին:

### ԽՆՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔՊԵՆՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍԻ ԴԻՄՈՒՄԸ ՀԻՆԳ ՄԵԺ ՏՆԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՍՈՒՍՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ուժ գործադրելուց, որպես միջազգային կոնֆլիկտների կարգավորման միջոցից, հրաժարվելու անհրաժեշտությունը օրեցօր ավելի հրամայական է դառնում:

Արդեն բոլոր երկրներում 600.000.000 տղամարդիկ և կանայք, իրենց ստորագրությունների համար լիակատար պատասխանատվության զգացմունքով, դրանք դրել են

Խաղաղության Պակտ կնքելու նպատակով հինգ մեծ տերությունների միջև բանակցություններ վարելու պահանջի տակ:

Հասարակական կարծիքի մի շարք նշանակալից հոսանքների ներկայացուցիչները և արտահայտվել են ուժի քաղաքականությունից հրաժարվելու՝ բանակցությունների քաղաքականության օգտին: Արտահայտելով

մարդկության կամքը, հաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսը, որը դոմամարվեց 1952 թ. Կրեմլտեմբերի 12-ին Վիեննայում, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության, Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարություններին հանդիսավոր կերպով հրավիրում է ձեռնա-

մուխ լինել այդ բանակցություններին, որոնցից կախված է խաղաղության պահպանումը:

Համաձայնությունը հինգ մեծ տերությունների միջև, հաղաղության Պակտի կնքումը վերջ կդնեն միջազգային լարվածությանը և աշխարհը կփրկեն մեծագույն աղետներից: Այդ են պահանջում ժողովուրդները:

### ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍԻ ԿՈՉԸ

Հրավիրելով հաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրես, հաղաղության Համաշխարհային Խորհուրդը ցույց տվեց իր ձգտումը՝ միավորելու այն տարբեր կազմակերպությունների, շարժումների ու հոսանքների ազնիվ ջանքերը, որոնք տարակարծիք են շատ հարցերում, բայց ձգտում են ժողովուրդների համաձայնությունը և ցանկանում են համատեղ պայքար մղել, որպեսզի պատերազմ թույլ չտան և ապահովեն խաղաղությունը:

Ազատ դիվանագիտական ցույց տվեց Կոնգրեսի միահամուռ կամքը՝ վերջ տալ ուժի քաղաքականությանը, որը մեծ դժբախտություններ է բերել ժողովուրդներին և սպառնում է աղետի մատնել մարդկությանը:

Մենք գտնում ենք, որ պետությունների միջև չկան այնպիսի տարաձայնություններ, որոնք հնարավոր չլինեն լուծել բանակցությունների միջոցով:

Բավական է ավելի քաղաքներն ու երկրները, բավական է մահաբեր դեմք կուտակել, բավական է ատելություն քարոզել և պատերազմի կոչ անել: Ժամանակն է կանգնել բանակցությունների ուղու վրա, ժամանակն է համաձայնության գալ:

Մենք դիմում ենք հինգ մեծ տերությունների՝ ԱՄՆ-ի, ՍՍՄՄ, Մեծ Բրիտանիայի, Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի և Ֆրանսիայի կառավարություններին, որոնցից այնքան մեծ չափով կախված է ամբողջ աշխարհի խաղաղությունը. մենք նրանց կոչ ենք անում հաղաղության Պակտ կնքելու մասին:

Մեծ պատասխանատվություն է ընկած հինգ մեծ տերությունների կառավարությունների վրա: Ժողովուրդները կսպասեն նրանց պատասխանին, ժողովուրդները կանեն ամեն բան, որպեսզի հաղթանակի բանակցությունների ոգին:

Մենք պահանջում ենք անհապաղ դադարեցնել պատերազմական բոլոր գործողությունները Կորեայում:

Համաձայնության գալու ոչ մի շանս չկա, քանի դեռ քաղաքներ են ավերվում, քանի դեռ արյուն է թափվում: Երբ պատերազմական գործողությունները դադարեն, պատերազմող կողմերը հեշտությամբ համաձայնության կզան վիճելի հարցերում:

Մենք համոզված ենք, որ մեր անաշուտ, արդարացի և մարդասիրական պահանջը կհանդիպի բարի կամքի բոլոր մարդկանց աջակցությանը:

Մենք պնդում ենք նաև անհապաղ դադարեցնել պատերազմական գործողությունները Վյետնամում, Լաոսում, Կամբոջայում ու Մալայայում և հարգել այդ երկրների ժողովուրդների անկախության անվիճելի իրավունքը:

Մենք պահանջում ենք դադարեցնել բռնությունը, որը նպատակ ունի ձնշել ազգային անկախության օրինական ձգտումներն այնպիսի երկրներում, ինչպես Թունիսը և Մարոկկոն:

Հաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսը հռչակում է բոլոր ժողովուրդների իրավունքը՝ ամօրինելու իրենց բախտը և ընտրելու իրենց ապրելակերպը առանց նրանց ներքին գործերին որևէ միջամտության՝ ինչպիսի շարժառիթներով էլ այդ միջամտությունը արդարացիվելու լինի: Բոլոր պետությունների ազգային անկախությունը խաղաղության ամենահոսանքի երաշխիքն է:

Մենք բողոքում ենք ոսսայական ամեն տեսակի խտրականության դեմ, որը, անարգելի մարդկային ցիտակցությունը, խորացնում է պատերազմի վտանգը:

Մենք համոզված ենք, որ ռազմական պակտերը, որոնց մեջ ավելի ուժեղ պետությունը ներքաշում է ավելի թույլին, որևէ երկրի տերիտորիայում օտարերկրյա բազաների ու գործերի անկախությունը լուրջ սպառնալիք են ներկայացնում այդ երկրի անվտանգության համար, որը կարող է պատերազմի մեջ նետվել հակառակ իր կամքի:

Մենք գտնում ենք, որ այն պետությունը, որը չի մասնակցում ոչ մի կոալիցիայի և օտարերկրյա զորքեր չի պահում իր տերիտորիայում, պետք է երաշխավորված լինի բացահայտ կամ թաքնված ազդեցիկ սպառնալիքի դեմ:

Վերջին պատերազմի երկու օջախները նոր հրդեհով են սպառնում Եվրոպային ու Ասիային: Սակայն կարելի է և պետք է բանակցությունների միջոցով հասնել գերմանական ու յապոնական պրոբլեմների խաղաղ լուծմանը: Մենք գտնում ենք, որ պետք է ամենակարճ ժամկետում միավորված դեմոկրատական Գերմանիայի հետ կնքել հաշտության պայմանագիր, որը բացառի նրա մասնակցությունը որևէ Երկրի դեմ ուղղված ռազմական դաշինքի, այն Գերմանիայի հետ, որտեղ տեղ չի լինի նացիզմին ու միլիտարիզմին, որոնք անցյալում այնքան դժբախտություն բերեցին Եվրոպային: Մենք առաջարկում ենք հաշտության պայմանագիր կնքել Յապոնիայի հետ, որը վերջ կդնի նրա օկուպացմանը և յապոնական ժողովրդին թույլ կտա վերադառնալ խաղաղասեր ազգերի ընտանիքը: Մենք գտնում ենք, որ պետք է վերսկսել այն բանակցությունները, որ կապված են Ալյուտիայի վերաբերյալ պետական պայմանագրի հետ, դա այդ երկիրը կազատի օտարերկրյա օկուպացիայից:

Մենք ծանոթացանք բակտերիոլոգիական զենքի գործադրման վերաբերյալ զեկուցումներին, որ ներկայացրել են Կորեա և Չինաստան այցելած՝ տարբեր երկրների ականավոր մասնագետները: Այդ զեկուցումներից ցնցված՝ մենք կտրականապես պահանջում ենք, որ անհապաղ արգելվի բակտերիոլոգիական պատերազմը և, որ բոլոր պետությունները միանան Ժընևի 1925 թվականի արձանագրությանը: Գիտության մեծ նվաճումները չպետք է միլիտնավոր անպաշտպան մարդկանց ոչնչացման միջոց լինեն: Մենք պահանջում ենք նաև անպայմանորեն արգելել ատոմային զենքը, քիմիական զենքը և քաղաքացիական բնակչության ոչնչացման մյուս միջոցները:

Մենք դատապարտում ենք անհեռատես մարդկանց, որոնք պնդում են, թե սպառաչնությունների մրցավազը կարող է ամրապնդել պետությունների անվտանգությունը: Մենք համոզված ենք, որ սպառաչնությունների մրցավազը, ընդհակառակը, ու-

ժեղացնում է սպառնալիքը բոլոր պետությունների՝ մեծերի ու փոքրերի համար:

Արտահայտելով ժողովուրդների կամքը, մենք պնդում ենք, որ պետի անհապաղ բանակցություններ սկսվեն զինաթափման մասին, որը պետք է լինի արդարացի, այլ ոչ թե միակողմանի: Մենք համոզված ենք, որ միջազգային էֆեկտիվ վերահսկողությունը հնարավորություն կտա իրագործել ընդհանուր, միաժամանակյա, աստիճանական և համեմատական զինաթափում:

Մենք պաշտպանում ենք բոլոր ժողովուրդների ներկայացուցիչների ցանկությունները, որոնք պնդում են շուտափույթ կերպով վերսկսել նյութական և կուլտուրական արժեքների փոխանակումը պետությունների միջև: Արտաքին առևտրի ասպարիզում, գիտության, գրականության և արվեստի նվաճումների փոխանակման ասպարիզում եղած խոչընդոտները խանգարում են մարդկության բարեկեցությանն ու պրոգրեսին:

Մենք գտնում ենք, որ ՄԱԿ-ի Կանոնադրությունը անվտանգության երաշխիքներ է տալիս աշխարհի բոլոր պետություններին, բայց այդ Կանոնադրության ոգին ու տառը խախտված են: Մենք պնդում ենք, որ պետի Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկան իրեն պատկանող տեղը գրավի ՄԱԿ-ում: Մենք պնդում ենք նաև ՄԱԿ-ում ընդունել 14 պետություններին, որոնք մինչև այժմ զրկված են այնտեղ իրենց ձայնը բարձրացնելու հնարավորությունից:

Վերջապես, մենք պնդում ենք, որ պետի ՄԱԿ-ը նորից կարողանա դառնալ այն վայրը, որտեղ կառավարությունները համաձայնության են դալիս, և այլևս չխաբի այն հույսերը, որ նրա վրա են դրել աշխարհի բոլոր ժողովուրդները: Ժողովուրդները ցանկանում են խաղաղության մեջ ապրել, անկախ այն բանից, թե ինչպիսին է նրանց երկրների հասարակարգը և ինչպիսին է նրանց բարձրագույն իդեալը: Պատերազմը ատելի է բոլոր ժողովուրդներին համար, պատերազմը իր ստվերն է գոտմարտկության բոլոր օրրանների վրա: Ժողովուրդները կարող են փոխել իրադարձությունների ընթացքը, մարդկանց վերադարձնել նրանց վստահությունն այն բանում, որ վաղվա օրը լինելու է խաղաղ:

Մենք աշխարհի ժողովուրդներին կոչ ենք անում պաշարել հանուն բանակցությունների ու համաձայնության ոգու, հանուն մարդկանց խաղաղության իրավունքի:

**«ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ  
ԱՄՐԱՊԵՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ  
ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ**

Դեկտեմբերի 17-ին և 20-ին ակադեմիկոս Դ. Վ. Սկրբելցիևի նախագահությամբ տեղի ունեցան «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» միջազգային Ստալինյան մրցանակների կոմիտեի նիստերը:

Կոմիտեն քննարկեց ընթացիկ տարվա միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհելու մասին ստացված առաջարկները և այդ հարցի առթիվ ընդունեց որոշում:

Ստորև հրապարակվում է Կոմիտեի որոշումը «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» 1952 թվականի միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհելու մասին:

**«ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊԵՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ»  
1952 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**«ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊԵՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ»  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 1952 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ՈՐՈՇՈՒՄԸ**

Խաղաղության պահպանման և ամրապնդման պայքարի գործին մատուցած աչքի ընկնող ծառայությունների համար «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհել աշխարհի տարբեր երկրների դեմոկրատական ուժերի հետևյալ ներկայացուցիչներին.

1. Իվ ՖԱՐժԻՆ— (Ֆրանսիա)
2. ՍԱՅՅՈՒԴԳԻՆ ԿԻՏՉԼՈՒՆ— Խաղաղության Համահնդկական խորհրդի նախագահ
3. ԷԼԻՋԱ ԲՐԱՆԿՈՅԻՆ— Բրազիլիական կանանց ֆեդերացիայի գործիչ
4. ՊՈՂ ՌՈՐՍՈՆԻՆ— (ԱՄՆ)
5. ԻՈՂԱՆՆԵՍ ԲԵՆԵՐԻՆ— գրող (Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկա)
6. ՋԵՅՄՍ ԷՆԴԻԿՈՏՏԻՆ— քահանա (Կանադա)
7. ԻԼՅԱ ԷՐԵՆԲՈՒՐԳԻՆ— գրող (ՍՍՌՄ)

**Կոմիտեի նախագահ՝** ակադեմիկոս Դ. Վ. ՍԿՐԵԼՑԻՆ

**Կոմիտեի նախագահի տեղակալներ՝** ԳՈ ՄՈ-ԺՈ (Չինաստան)  
ԼՈՒԻ ԱՐԱԳՈՆ (Ֆրանսիա)

**Կոմիտեի անդամներ՝**

- |                           |                               |
|---------------------------|-------------------------------|
| Մ. ԱՆԳԵՐՍԵՆ-ՆԵՔՍԵ (Իսպիա) | ՄԻԽԱՅԻԼ ՍԱԴՈՎՅԱՆՈՒ (Ռումինիա) |
| ՅԱՆ ԴԵՄԲՈՎՍԿԻ (Լեհաստան)  | ՊԱՔԼՈ ՆԵՐՈՒԴԱ (Չիլի)          |
| ՋՈՆ ԲԵՆՆԱԼ (Անգլիա)       | Ա. Ա. ՖԱԴԵՆՎ (ՍՍՌՄ)           |

20 դեկտեմբերի, 1952 թվականի  
Քաղաք Մոսկվա

